Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Սեպտեմբերի 5-ի նիստի

Արձանագրություն թ. 1

Օրակարգ

1. Ընդունելության արդյունքներ
2. Ծավալ-դասաբաշխման քննարկում, հաստիքակազմի վերանայում
3. 2022-23 ուս.տարվա Էլեկտրոնային հարթակում տեղադրվող առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի քննարկվում և հաստատում

Լսեցին՝ Ընդունելության արդյունքների մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ 2022-2023 ուս.տարում գործիքային կատարողականության բաժին ընդունվել են 30 ուսանող: Առաջին օրը հանդիպում կազմակերպվեց 1-ին կուրսի ուանողների հետ: Կան բավականին գրագետ և խելացի ուսանողներ: Ընդունվել են այնպիսի գործիքներ, որոնք պակասում էին նվագախմբերում: Հուսանք կունենանք լավ արդյունքներ:

Որոշեցին՝ Պարբերաբար 1-ին կուրսերում կազմակերպել դասալումներ, ուսանողների հաջողություններին ականատես լինելու համար:

Լսեցին՝ Ծավալ-դասաբաշխման քննարկում, հաստիքակազմի վերանայում

Արտահայտվեցին՝ Ծանոթացան ընթացիկ դասաբաշխման հետ, հստակեցվեցին ժամերը:

Որոշեցին՝ Օգտագործել բոլոր ռեսուրսները բարեհաջող և բուռն ուսումնական տարի ունենալու համար:

Լսեցին՝ 2022-23 ուս.տարվա Էլեկտրոնային հարթակում տեղադրվող առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների և հարցաշարերի քննարկման և հաստատման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը և ամբիոնի որակի պատասխանատու Գ.Հեբոյանը ներկայացրեցին, որ ամբիոնում արդեն պատրաստ են և վերանայվել են նոր ուսումնական տարվա առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, համապատասխանեցվել են ներկայացված նոր պահանջներին: Բոլոր առարկաների համար պատրաստված փաթեթները արդեն տեղադրված են էլեկտրոնային հարթակում:

Որոշեցին՝ Հաստատել առարկայական նկարագրերը, թեմատիկ տրոհումները և միջանկյալների հարցաշաշերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի
Հոկտեմբերի 14-ի նիստի

Արձանագրություն թ. 2

Օրակարգ՝

1. 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացման քննարկում, կազմակերպում
2. Երաժշտության ամբիոնի 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի դասալումների պլան-ժամանակացույցի քննարկման մասին հարցը

Լսեցին՝ 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացման քննարկում, կազմակերպում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ 2022-2023 ուս.տարում

4-րդ կուրսը պրակտիկան կանցկացնի ԿԳՄՄՆ Գեղարվեստական դաստիարակության ու մշակույթի մանկապատանեկան կենտրոնում 4 շաբաթ տևողությամբ: Պրակտիկայի ղեկավարներն են Սերինե Թադևոսյանը և Սարգիս Գայիջյանը:

Որոշեցին՝ Տեսաձանյագրել ուսանողների ելույթները: Պարբերաբար այցեր կատարել: Պրակտիկայի ղեկավարները պրակտիկայի ավարտից հետո կներկայացնեն հաշվետվություն պրակտիկայի անցկացման մասին, որը կքննարկվի հաջորդ ամբիոնի նիստում:

Լսեցին՝ Երաժշտության ամբիոնի 2022-23 ուստարվա 1-ին կիսամյակի դասալումների պլան-ժամանակացույցի քննարկման մասին հարցը: **Արտահայտվեցին՝** Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ կազմվել է 1-ին կիսամյակի դասալումների պլան-ժամանակացույց: Դասալումները կիրականացվեն ամբիոնի վարիչի և որակի պատասխանատուի կողմից: Արդյունքները կքննարկվեն ամբիոնի նիստերում:

Որոշեցին՝ Հաստատել ամբիոնի դասալումների պլան-ժամանակացույցը և ներկայացնել ֆակուլտետի խորհրդին հաստատման:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ **Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Նոյեմբերի 28-ի նիստի

Արձանագրություն թ. 3

Օրակարգ՝

1. 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացման ամփոփում
2. Միջանկյալ ստուգումների անցկացման քննարկում: Ժամանակացույցի հստակեցում

Լսեցին՝ 4-րդ կուրսի պրակտիկայի անցկացման ամփոփում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ 2022-2023 ուս.տարում Պրակտիկայի անցկացման արդյունքները գնահատվեցին լավ:Ուսանողները տեղի նվագախմբերում մասնակցել էին փորձերին: Ընտրել էին ստեղծագործություններ և ղեկավարել դրանք նվագախմբի հետ: Փորձերը անցել էին բավականին արդյունավետ: Փորձերը տեսաձայնագրվել են: Պրակտիկայի ղեկավարներ՝ Ս.Թադևոսյանը և Ս. Գայիջյանը ներկայացրել են հաշվետվություն, որտեղ նկարագրված է պրակտիկայի անցկացման ընթացքը և արդյունքները:

Որոշեցին՝ Փորձերի տեսաձայնագրությունները տեղադրել առցանց հարթակում:

Լսեցին՝ Միջանկյալ ստուգումների անցկացման քննարկում: Ժամանակացույցի հստակեցում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ պետք է կատարել դասալսումներ, Ծրագրերը հստակեցնել:

Որոշեցին՝ Ընտրվեցին ընթերականեր, հստակեցվեց միջանկյալների անցկացման ժամանակացույցը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Դեկտեմբերի 5-ի նիստի

Արձանագրություն թ. 4

Օրակարգ՝

1. 1-ին կիսամյակի քննությունների նախապատրաստում, քննական տոմսերի քննարկում և հաստատում
2. Տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման մասին

Լսեցին՝ 1-ին կիսամյակի քննությունների նախապատրաստում, քննական տոմսերի քննարկում և հաստատում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ քննությունները տոմսերը պետք է վերանայվեն, ծրագրերը հստակեցվեն: Կարևորվեց նաև ընթերակաների ներկայությունը: Հանձնարարվեց ուսանողների հանդեպ խիստ լինել:

Որոշեցին՝ Հաստատել քննական տոմսերը:

Լսեցին՝ Տարեկան հաշվետվության քննարկման և հաստատման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, հաշվետվությունը կազմվել է հաշվի առնելով ամբիոնի կատարած աշխատանքը հաշվետու տարում, բուհի 100 ամյակի հետ կապված միջոցառումները ևս տեղ են գտել հաշվետվությունում:

Որոշեցին՝ Ամբիոնի նիստում քննարկվեց և հաստատվեց տարեկան հաշվետվությունը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Հունվարի 27-ի նիստի

Արձանագրություն թիվ 5

Օրակարգ՝

1. **Կիսամյակային քննությունների անցկացման ամփոփում:**
2. **3-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպում:**
3. **2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների քննարկում, հաստատում:**

Լսեցին՝ Կիսամյակային քննությունների անցկացման մասին :

Արտահայտվեցին՝ Երաժշտության ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը և որակի պատասխանատու Գ.Հեբոյանը ներկայացրեցին, որ 2022-23 ուս.տարվա 1-ին կիսամյակի քննությունները անցել են պատշաճ մակարդակով: Ուսողները բավականին լավ էին պատրաստված: Ամբիոնի վարիչը ներկայացրեց նաև որ բոլոր քննությունների համար ստեղծվել էր հանձնաժողով:

Որոշեցին՝ Նոր ուսումնական կիսամյակում շարունակել դասալումները: Հստակեցնել միջանկյալների և քննությունների ծրագրերը:

Լսեցին՝ 3-րդ կուրսի պրակտիկայի կազմակերպման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Երաժշտության ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ 3-րդ կուրսի պրակտիկան կանցկացվի ԿԳՄՍՆ Գեղարվեստական դաստիարակության ու մշակույթի մանկապատանեկան կենտրոնում, 4 շաբաթ տևողությամբ: Պրակտիկայի ղեկավարներն են Սերինե Թադևոսյանը և Սարգիս Գայիջյանը: Ուսանողները կծանոթանան նվագախմբերի հետ: Կուսումնասիրեն ստեղծագործությունները, կմասնակցեն փորձերին:

Որոշեցին՝ Տեսաձանյագրելպրակտիկայի անցկացման ընթացքը: Պարբերաբար այցեր կատարել: Պրակտիկայի ղեկավարները պրակտիկայի ավարտից հետո կներկայացնեն հաշվետվություն պրակտիկայի անցկացման մասին, որը կքննարկվի հաջորդ ամբիոնի նիստում:

Լսեցին՝ 2-րդ կիսամյակի առարկայական նկարագրերի, թեմատիկ տրոհումների քննարկում, հաստատում:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը և ամբիոնի որակի պատասխանատու Գ.Հեբոյանը ներկայացրեցին, որ ամբիոնում արդեն պատրաստ են և վերանայվել են նոր ուսումնական կիսամյակի առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները, համապատասխանեցվել են ներկայացված նոր պահանջներին: Բոլոր առարկաների համար պատրաստված փաթեթները տեղադրվում են էլեկտրոնային հարթակում:

Որոշեցին՝ Հաստատել նոր ուսումնական կիսամյակի առարկայական նկարագրերը և թեմատիկ տրոհումները:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Փետրվարի 17-ի նիստի

Արձանագրություն թիվ 6

Օրակարգ՝

1. **ՄԿԾ-երի վերջնարդյունքներում փոփոխություններ կատարելու մասին հարց:**

Լսեցին՝ Երաժշտության ամբիոնի ՄԿԾ-երի վերջնարդյունքներում փոփոխություններ կատարելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ վերանայվել և փոփոխվել են ՄԿԾ-երի վերջնարդյունքները ըստ պահանջված ձևաչափի:

Որոշեցին՝ Ընդունել ի գիտություն և ՄԿԾ-երի վերջնարդյունքների հաստատված փոփոխությունները ներկայացնել ֆակուլտետի խորհրդին հաստատման:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Մարտի 10-ի նիստի

Արձանագրություն թ. 7

Օրակարգ՝

1. Ուսումնական պրակտիկայի արդյունքների ամփոփման մասին
2. Ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների թեմաների քննարկման մասին հարցը

Լսեցին՝ Ուսումնական պրակտիկայի արդյունքների ամփոփման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց, որ մարտի 8-ին ավարտվեց ուսումնական պրակտիկան: Այն անցավ բավականին արդյունավետ: Ուսանողները սահմանված ժամերին ներկա էին գտնվում նվագախմբերի փորձերին: Հետևում էին դիրիժորների աշխատանքին, ուսումնասիրում էին այն ստեղծագործությունների պարտիտուրաները, որոնք կատարում էր նվագախումբը: Երբեմն-երբեմն ուսանողները փորձում էին ինքնուրույն անցկացնել փորձերը: Պրակտիկան անցել է բավականին արդյունավետ և ուսանողներին տվել է բավականաչափ գործնական հմտություններ:

Որոշեցին՝ Վերանայել պրակտիկայի անցկացման ձևը, այն էլ ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու նպատակով:

Լսեցին՝ Ավարտական կուրսերի դիպլոմային աշխատանքների թեմաների քննարկման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Դիրիժորություն առարկայի դասախոսները ներկայացրեցին, որ թեմաներն արդեն ընտրված են; Ստեղծագործությունները ուսանողները փորձում են նվագախմբերի հետ: Մինչ նախապաշտպանությունը կկատարվեն բոլոր շտկումները, կլրացվեն բոլոր բացթողումները՝ պատշաճ կերպով ներկայանալու համար: Նվագախմբի ղեկավարները նշեցին, որ արդեն սկսվել են պետական քննության փորձերը նվագախմբի հետ: Փորձերին մասնակցում են նաև

դիրիժորության դասախոսները, ուսանողներին ճիշտ ուղղություն ցույց տալու նպատակով:

Որոշեցին՝ Ներկա գտնվել նվագախմբի փորձերին, հետևել ուսանողների և նրանց ղեկավարների աշխատանքին: Արդյունքները քննարկել հաջորդ ամբիոնի նիստում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Ապրիլի 28-ի նիստի

Արձանագրություն թիվ 8

Օրակարգ՝

1. **Երաժշտության ամբիոնի դոցենտ Գայանե Մխիթարի Հեբոյանին վաստակավոր մանկավարժի կոչում շնորհելու մասին հարց**
2. **ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված կազմակեպվելիք համերգների մասին քննարկում**
3. **Ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմի քննարկում**

Լսեցին՝ Երաժշտության ամբիոնի դոցենտ Գայանե Մխիթարի Հեբոյանին վաստակավոր մանկավարժի կոչում շնորհելու մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը, ամբիոնի պրոֆեսորներ Հասմիկ Լեյլոյանը, Երվանդ Երզնկյանը, Նորայր Դավթյանը, դոցենտներ Կոլյա Մարտիրոսյանը, Սերինե Թադևոսյանը, Սևադա Շհոյանը:

Ամբիոնի վարիչ Արա Գևորգյանը ներկայացրեց, որ Գայանե Հեբոյանը երկար տարիներ աշխատում է ՀՊՄՀ-ի Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբինում որպես դասախոս, դոցենտ: Աշխատանքային տարիների ընթացքում աչքի է ընկել մասնագիտական գերազանց կարողություններով, բարձր պատրաստվածությամբ: Ուստի ամբիոնը միջնորդում է ֆակուլտետի խորհրդին ամբիոնի դոցենտ Գայանե Հեբոյանին վաստակավոր մանկավարժի կոչում շնորհելու համար:

Որոշեցին՝ Միջնորդել ֆակուլտետի խորհրդին՝ ամբիոնի դոցենտ Գայանե Հեբոյանին վաստակավոր մանկավարժի կոչում շնորհելու համար:

Լսեցին՝ ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված կազմակեպվելիք համերգների մասին քննարկման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Երաժշտության ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց, որ ՀՊՄՀ 100 ամյակի առթիվ կազմակերպվում են մի շարք միջոցառումներ: Երաժշտության ամբիոնը ևս կկազմակերպի համերգների շարք:

Մայիս ամսին ամբիոնի նվագախմբերը և անսամբլները համերգներով հանդես կգան Աշտարակում, Վանաձորում, Արևշատ գյուղում: Նվագախմբերի փորձերը ընթանում են շատ արդյունավետ: Ֆակուլտետի դահլիճում ևս կազմակերպվեց համերգ թիվ 13 հատուկ դպրոցի սաների հետ համատեղ, որտեղ ելույթ ունեցան ամբիոնի նվագախմբերը և անսամբլները: **Որոշեցին՝** Հաճախակի համերգներ կազմակերպել տարբեր մարզերում և տեղի դպրոցներում՝ նպաստելու ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը:

Լսեցին՝ Ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմի քննարկման մասին հարցը:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա. Գևորգյանը ներկայացրեց ամփոփիչ ատեստավորման քննության հանձնաժողովի կազմը: Այս տարի հանձնաժողովի նախագահ է ընտրվել ՀՀ ԶՈՒ ռազմանվագախմբային ծառայության պետ, Գլխավոր զինվորական դիրիժոր, գնդապետ Հայկ Գրիգորյանը, անդամներն են Կոմիտասի անվան Երևանի պետական կոնսերվատորիայի հայ երաժշտության ֆոլկլորագիտության ամբիոնի պրոֆեսոր, ՀՀ ժողովրդական արտիստ Թովմաս Պողոսյանը և ԿԳՄՄՆ գեղարվեստական դաստիարակության և մշակույթի մանկապատանեկան մշակույթի կենտրոնի ղեկավար, ՀՀ վաստակավոր մանկավարժ Սամվել Բալոյանը: Ամբիոնից հանձնաժողովի կազմում են նաև ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Նորայր Դավթյանը և դոցենտ Կոլյա Մարտիրոսյանը:

Որոշեցին՝ Հաստատել հանձնաժողովի կազմը: Պատրաստվել պետական քննություններին:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության ամբիոնի

Մայիսի 26-ի նիստի

Արձանագրություն թիվ 9

Օրակարգ՝

1. **ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված համերգների ամփոփում:**
2. **Ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների ամփոփում:**
3. **2-րդ կիսամյակի ամփոփիչ քննությունների անցկացման մասին հարցերի քննարկում:**

Լսեցին՝ ՀՊՄՀ 100 ամյակին նվիրված համերգների ամփոփման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրեց, որ համերգները անցան լավ: Նվագախմբերը և անսամբլները գտնվում էին լավ վիճակում: Համերգներին մասնակցում էին ժողգործիքների նվագախումբը (գեղ. ղեկավար Նորայր Դավթյան), քանոնահարների խումբը (ղեկ.՝ Հասմիկ Լեյլոյան), Զազ-բենդը (ղեկ.՝ Երվանդ Երզնկյան), Փողային նվագախումբը (գեղ. ղեկ. Կոլյա Մարտիրոսյան), դուդուկահարների անսամբլը (ղեկ.՝ Հրաչ Նազարյան), կլարնետահարների անսամբլը (ղեկ.՝ Սնադա Շհոյան), դհոլահարների համույթը (ղեկ.՝ Արազ Օրդինյան): Ա.Գևորգյանը նշեց, որ շատ կարևորում է նման համերգները:

Որոշեցին՝ Հաճախակի կազմակերպել համերգներ, դասարանական համերգներ, անսամբլային ելույթներ:

Լսեցին՝ Ամփոփիչ ատեստավորման քննության արդյունքների ամփոփման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրեց, որ ավարտական պետական քննությունները անցան շատ լավ: Ուսանողները ներկայացրեցին շատ լավ ծրագիր: Նվագախմբերը գտնվում էին արտակարգ վիճակում: Հանձնաժողովը բարձր գնահատեց խմբերի ղեկավարների, նվագախմբի ղեկավարների և ուսանողների կատարած

աշխատանքը: Լավագույն ուսանողներ ընտրվեցին Գրիգոր Չաթալյանը, Կամո Արզոյանը և Դիանա Զարոյանը:

Պետական քննությունների արդյունքները կամփոփվեն հանձնաժողովի նախագահի հաշվետվության մեջ:

Որոշեցին՝ Ներկաները դրական արձագանքեցին: Որոշվեց հետևել նվագախմբերին, գործիքային մասի բացթողումները վերացնելու նպատակով անցկացնել փորձեր:

Լսեցին՝ 2-րդ կիսամյակի ամփոփիչ քննությունների անցկացման մասին հարցերի քննարկման մասին:

Արտահայտվեցին՝՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը ներկայացրեց, որ շուտով կսկսվեն կիսամյակի ավարտական քննությունները: Ամբիոնի որակի պատասխանատու Գայանե Հեբոյանի հետ միասին ներկա կգտնվեն բոլոր քննություններին, կծանոթանան ծրագրերի հետ: Դասախոսներին առաջարկվեց լինել խիստ և պահանջկոտ ուսանողների հանդեպ:

Որոշեցին՝ Հետևել քննությունների ընթացքին, արդյունքները քննարկել հաջորդ ամբիոնի նիստում:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ **Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Քարտուղար՝ **Ա.Մկրտչյան**

Կուլտուրայի ֆակուլտետի Երաժշտության
ամբիոնի
Հունիսի 29-ի նիստի
Արձանագրություն թիվ
10

Օրակարգ՝

1. **2022-2023 ուս.տարվա կիսամյակային քննությունների անցկացման մասին**
2. **2022-2023 ուսումնական տարվա դասալումների ամփոփման մասին**

Լսեցին՝ 2022-2023 ուս.տարվա կիսամյակային քննությունների անցկացման մասին:

Արտահայտվեցին՝ Ամբիոնի վարիչ Ա.Գևորգյանը նշեց, որ կիսամյակային քննությունները անցան ըստ գրաֆիկների:

Ամբիոնի նսիտում քննարկվել էին ներկայացված հարցաշարերը այն առարկաների համար, որոնց քննությունը անցկացվեց տեսական կարգով: Հարցատոմսերը մշակված, կնքված և ստորագրված էին: Քննությունները լավ անցան, ուսանողները պատրաստ էին:

Որոշեցին՝ Մյուս ուսումնական տարվա համար վերանայել հարցաշարերը և հարցատոմսերը: **Լսեցին՝** 2022-2023 ուսումնական տարվա դասալումների ամփոփման մասին: **Արտահայտվեցին՝** Ամբիոնի վարիչը նշեց, որ ընդանուր առմամբ գոհ է դասալսման արդյունքներից: Դասախոսներից պահանջվում է էլ ավելի ուշադիր և հետևողականորեն վերաբերվել դասերին: Ավելի խիստ լինել ուսանողների բացակայությունների հարցում: Թարմացնել ծրագրերը:

Որոշեցին՝ Ի նկատի ունենալ բոլոր խորհուրդները: Կրթական որակն էլ ավելի բարձրացնելու նպատակով թարմացնել առարկայի ծրագրերը:

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ա.Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

Քարտուղար՝ Ա.Մկրտչյան